Գործ թիվ ԿԳ-14066

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի խորհրդի
2015 թվականի հունվարի 26-ի թիվ 14-րդ կարգապահական նիստի

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ թիվ ԿԳ/11-Ա

ՓԱՍՏԱԲԱՆ ԿԱՐԵՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի (այսուհետ՝ նաև **Պալատ**) խորհուրդը (այսուհետ՝ նաև **Խորհուրդ**), նախագահությամբ Խորհրդի անդամ՝ Կարապետ Աղաջանյանի, մասնակցությամբ Խորհրդի անդամներ՝ Մելանյա Առուստամյանի, Լիպարիտ Սիմոնյանի, Տիգրան Խուրշուդյանի, Երվանդ Վարոսյանի, Կարեն Մեժլումյանի, Լուսինե Սահակյանի, Նելլի Հարությունյանի, Ալեքսանդր Սիրունյանի կազմով, քարտուղարությամբ Նոննա Համբարձումյանի, քննության առնելով փաստաբան Կարեն Հովհաննիսյանի (փաստաբանական գործունեության արտոնագիր № 1212) (այսուհետ նաև՝ **Պատասխանող**), կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. Կարգապահական վարույթ հարուցելու առիթը և հիմքերը.

«Դանհիս» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության տնօրեն Վրեժ Բալոյանը (**այսուհետ՝ Դիմող կամ Ընկերություն**)՝ դիմելով Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատ (**այսուհետ նաև Պալատ**), հայտնել է, որ Ընկերության մասնակցությամբ Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանում քննվող թիվ ԵԿԴ/2543/02/13 քաղաքացիական գործով Ընկերության՝ որպես գործով հայցվորի շահերն է ներկայացրել փաստաբան Կարեն Հովհաննիսյանը, ով մասնակցել է նշված գործով 21.02.2014թ. և 28.03.2014թ. նշանակված նախնական դատական նիստերին, այդ ընթացքում կատարել է հարցումներ, ձեռք է բերել ապացույցներ՝ դրանք դատարանին ներկայացնելու նպատակով: Դիմողը նշել է, որ 20.05.2014թ. ժամը 16:00-ին նշանակված նախնական դատական նիստից մեկ-երկու ժամ առաջ փաստաբան Կարեն Հովհաննիսյանը տեղեկացրել է, որ չի մասնակցելու նշանակված նախնական դատական նիստին և հրաժարվում է փաստաբանական ծառայություններ մատուցելուց: Դիմողի պնդմամբ փաստաբան Կարեն Հովհաննիսյանը նույնիսկ միջնորդություն չի ներկայացրել դատարան դատական

նիստը հետաձգելու մասին, չի կատարել որևէ գործողություն դատարանին տեղեկացնելու համար, որ հրաժարվում է Ընկերությանը փաստաբանական ծառայությունների մատուցումից, ինչպես նաև դատարանին չի տրամադրել գործի փաստաթղթերը, այդ թվում՝ ձեռք բերված նոր ապացույցները: Փաստաբան Կարեն Հովհաննիսյանի անգործության արդյունքում, դատարանը շարունակել է գործի քննությունը, գործը համարել է դատաքննությանը նախապատրաստված և որոշում է կայացրել գործը դատաքննության նշանակելու մասին: Դիմողը նաև հայտնել է, որ փաստաբան Կարեն Հովհաննիսյանը Ընկերության հետ չի կնքել վճարովի հիմունքներով իրավական օգնություն մատուցելու պայմանագիր, չնայած փաստացի ստացել է ծառայության վճար՝ 100.000 ՀՀ դրամ գումար:

Դիմողը խնդրել է փաստաբան Կարեն Հովհաննիսյանի նկատմամբ հարուցել կարգապահական վարույթ և ենթարկել կարգապահական պատասխանատվության:

2. Կարգապահական վարույթ հարուցելու մասին Պալատի նախագահի որոշումը

2014 թվականի հունիսի 12-ին Պալատի նախագահի կողմից կայացվել է «Փաստաբան Կարեն Հովհաննիսյանի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու հարցը քննարկելու մասին» 191-Ա/ԿԳ-14066 որոշումը և **Փաստաբան Կարեն Ռաֆայելի Հովհաննիսյանի (արտոնագիր թիվ 1212) նկատմամբ հարուցվել կարգապահական վարույթ՝ Կանոնագրքի 2.7.2, 3.1.3 և 3.8.4 ենթակետերի պահանջների խախտման հատկանիշներով կարգապահական գործը:**

3. Դիմողի և Պատասխանողի բացատրությունները

Դիմող «Դանիիս» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության տնօրեն Վրեժ Բալույանը (**այսուհետ Դիմող կամ Ընկերություն**), դիմելով Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատ (**այսուհետ նաև Պալատ**), հայտնել է, որ Ընկերության մասնակցությամբ Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանում քննվող թիվ ԵԿԴ/2543/02/13 քաղաքացիական գործով Ընկերության՝ որպես գործով հայցվորի շահերն է ներկայացրել փաստաբան Կարեն Հովհաննիսյանը, ով մասնակցել է նշված գործով 21.02.2014թ. և 28.03.2014թ. նշանակված նախնական դատական նիստերին, այդ ընթացքում կատարել է հարցումներ, ձեռք է բերել ապացույցներ՝ դրանք դատարանին ներկայացնելու նպատակով: Դիմողը նշել է, որ 20.05.2014թ. ժամը 16:00-ին նշանակված նախնական դատական նիստից մեկ-երկու ժամ առաջ փաստաբան Կարեն Հովհաննիսյանը տեղեկացրել է, որ չի մասնակցելու նշանակված նախնական դատական նիստին և հրաժարվում է փաստաբանական ծառայություններ մատուցելուց: Դիմողի պնդմամբ փաստաբան Կարեն Հովհաննիսյանը նույնիսկ միջնորդություն չի ներկայացրել դատարան դատական նիստը հետաձգելու մասին, չի կատարել որևէ գործողություն դատարանին

տեղեկացնելու համար, որ հրաժարվում է Ընկերությանը փաստաբանական ծառայությունների մատուցումից, ինչպես նաև դատարանին չի տրամադրել գործի փաստաթղթերը, այդ թվում ձեռք բերված նոր ապացույցները: Փաստաբան Կարեն Հովհաննիսյանի անգործության արդյունքում, դատարանը շարունակել է գործի քննությունը, գործը համարել է դատաքննությանը նախապատրաստված և որոշում է կայացրել գործը դատաքննության նշանակելու մասին: Դիմողը նաև հայտնել է, որ փաստաբան Կարեն Հովհաննիսյանը Ընկերության հետ չի կնքել վճարովի հիմունքներով իրավական օգնություն մատուցելու պայմանագիր, չնայած փաստացի ստացել է ծառայության վճար՝ 100.000 ՀՀ դրամ գումար:

Սույն կարգապահական գործի քննությանը, որպես դիմողի ներկայացուցիչ Պալատի խորհրդի նիստին մասնակցել է փաստաբան՝ Գեղամ Վանիկի Այվազյանը: Նա պնդեց դիմումը և ավելացրեց, որ փաստաբան Կարեն Հովհաննիսյանի կողմից «Դանիիս» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանն իրավաբանական ծառայություններ մատուցելու վերաբերյալ բանակցությունները վարվել են իր կողմից, ինչպես նաև ծառայության դիմաց վարձավճարը տրամադրվել է իր կողմից, սկզբում առձեռն վճարել է հիսուն հազար դրամ, իսկ մնացածը տվել է հետագայում՝ հիսուն հազար դրամին համարժեք բնամթերքով: Նա նշեց, որ պայմանագիր չի կնքվել և գումարը վճարելու և պատասխանողի կողմից այն ստանալու փաստը հաստատող որևէ ապացույց չի կարող ներկայացնել: Նա նշեց նաև, որ 20.05.2014թ. «Դանիիս» ՍՊԸ-ը դիմում է ներկայացրել Կենտրոն և Նորք-Մարաշ ընդհանուր իրավասության դատարան թիվ ԵԿԴ/2543/02/13 քաղաքացիական գործը հետաձգելու մասին այն հիմքով, որ ընկերության ներկայացուցիչ Կարեն Հովհաննիսյանը չի մասնակցելու դատական նիստին, իսկ ընկերությունը չի հասցրել գործով նոր փաստաբան ներգրավել, քանի որ չի հասցրել ժամանակ չունենալու պատճառով:

Պատասխանող Կարեն Հովհաննիսյանը կարգապահական գործի նախապատրաստման ընթացքում բացատրություն է տվել: Նա կարգապահական գործի քննությանը ներկայացավ և բացատրություն տվեց այն մասին, որ իր կողմից, որպես «Դանիիս» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության ներկայացուցչի ձեռնարկվել են բոլոր անհրաժեշտ գործողությունները կազմակերպության իրավունքների և շահերի պաշտպանության համար, այն է՝ ծանոթացել է գործի նյութերին, պատրաստել է հայցադիմում, կատարել է հարցում, դատարանում ներկայացրել է միջնորդություններ, ներկայացրել է առարկություններ մյուս կողմի ներկայացուցչի կատարած միջնորդությունների դեմ: Նա նշեց, որ վերը նշված ծառայությունների մատուցման վերաբերյալ պայմանագիր չի կնքվել և իրեն ոչ կանխիկ և ոչ էլ անկանխիկ ձևով երբեք գումար չի փոխանցվել: Նա երբեք չի հրաժարվել իրավաբանական ծառայություններ մատուցել «Դանիիս» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը: 2014թ-ի մայիսի 20-ին առավոտյան ժամը 11:00-ի սահմաններում հայտնել է, որ չի կարող մասնակցել 20.05.2014թ-ին ժ.16:00-ին նշանակված «Դանիիս» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության գործով դատական նիստին, քանի որ նույն օրը ժ.16:30-ին պետք է մասնակցեր Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանների

ընդհանուր իրավասության դատարանում քննվող թիվ ԵՄԴ/0800/02/13 քաղաքացիական գործով: Դիմումատուն պահանջել է փաստաբանական ծառայություններ մատուցելուց հրաժարվելու դիմում ներկայացնել դատարան, իսկ նա հայտնել է, որ չի հրաժարվում ծառայություններ մատուցելուց և հետևաբար չի կատարի դիմումատուի խնդրանքը և միաժամանակ առաջարկել է դիմողին հրաժարվելու հետ կապված դիմում ներկայացնել դատարան և այդ հիմքով հետաձգել գործի քննությունը մինչև նոր ներկայացուցիչ ունենալը:

4. Պալատի կարգապահական վարույթի գործ նախապատրաստող անձի եզրակացությունը

Կարգապահական գործը հանձնվել է Պալատի կարգապահական վարույթի գործ նախապատրաստող անձ, փաստաբան Հարություն Հարությունյանին: Վերջինս հավաքագրել է տվյալ գործին վերաբերող ապացույցները և ուսումնասիրել գործում առկա ապացույցները, որի արդյունքներով 2014թ-ի օգոստոսի 19-ին կազմել է եզրակացություն, ըստ որի. Հիմք ընդունելով Վարույթի կարգի 22-րդ կետը՝ ապացույցների հետազոտման և գնահատման արդյունքում գտել է, որ պատասխանողի կողմից կատարված արարքը չի բավարարում Փաստաբանի վարքագծի կանոնագրքի 2.7.2,3.1.3,և 3.8.4 խախտման հատկանիշներով սահմանված արարքի հատկանիշներին:

5. Դիմողի և պատասխանողի դիրքորոշումը կարգապահական գործը նախապատրաստողի եզրակացության վերաբերյալ

Ներկայացված եզրակացության կապակցության կողմերը որևէ դիրքորոշում չեն հայտնել:

6. Գործի հանգամանքները՝ առկա ապացույցների վկայակոչմամբ

1. Դիմողի 21.05.2014թ. դիմումը:

2. Փաստաբան Կարեն Հովհաննիսյանի 25.06.2014թ. բացատրությունը:

3. Դիմողի ներկայացուցիչ Փաստաբան՝ Գեղամ Այվազյանի 15.08.2014թ. դիմումը կարգապահական գործը նախապատրաստողին:

4. 26.01.2015թ. կարգապահական գործի նիստի ընթացքում պատասխանողի բանավոր բացատրությունը և դիմողի ներկայացուցչի դիրքորոշումը:

5. 20.05.2014թ. «Դանիիս» ՍՊԸ-ի դիմումն ուղղված Կենտրոն և Նորք-Մարաշ դատարան՝ գործը հետաձգելու մասին:

7. Պատասխանողի անձը բնութագրող հանգամանքները

Պատասխանող՝ Կարեն Հովհաննիսյանը փաստաբանի թիվ 1212 արտոնագիրը ստացել է 15.10.2011թ.-ին: 2011-2014թթ. ընկած ժամանակահատվածում նրա նկատմամբ այլ կարգապահական վարույթ չի

հարուցվել:

8. Պալատի խորհրդի պատճառաբանված եզրակացությունը և որոշումը

Գնահատելով գործում առկա ապացույցները, լսելով դիմողի ներկայացուցչին և պատասխանողի բացատրությունները՝ Խորհուրդը գտնում է, որ հարուցված կարգապահական վարույթի արդյունքում փաստաբան Կարեն Հովհաննիսյանը ենթակա է կարգապահական պատասխանատվության Կանոնագրքի 2.7.2 ենթակետի խախտում կատարելու համար, քանի որ նա հանդիսանալով «Դանիիս» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության ներկայացուցիչ իր վստահորդին դատական նիստից ընդամենը մի քանի ժամ առաջ է հայտնել, որ չի կարող մասնակցել նախօրոք իր հետ համաձայնեցված 20.05.2014թ-ին ժ.16:00-ին նշանակված դատական նիստին, քանի որ նույն օրը ժ.16:30-ն պետք է մասնակցեր Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանում քննվող մեկ այլ քաղաքացիական գործով: Դիմումատուն պահանջել է փաստաբանական ծառայություններ մատուցելուց հրաժարվելու դիմում ներկայացնել դատարան, իսկ նա հայտնել է, որ չի հրաժարվում ծառայություններ մատուցելուց և հետևաբար չի կատարել դիմումատուի խնդրանքը՝ միաժամանակ առաջարկելով դիմումատուին հրաժարվելու հետ կապված դիմում ներկայացնել դատարան, և այդ հիմքով հետաձգել գործի քննությունը մինչև նոր ներկայացուցիչ ունենալը:

Փաստորեն պատասխանողը իր կողմից դրսևորած անգործության հետևանքով վստահորդի նկատմամբ ցուցաբերել է ակնհայտ անտարբեր և անպատասխանատու վերաբերմունք և իր վստահորդին փաստացի ցույց չի տվել բարեխիղճ իրավաբանական օգնություն և պատշաճ չի կատարել վստահորդի հանձնարարության համար անհրաժեշտ գործողություններ: Մինչդեռ փաստաբանը պարտավոր է ժամանակին և ջանասիրաբար խորհուրդներ տալ իր վստահորդին և հանդես գալ նրա անունից:

ՀՀ Փաստաբանների Պալատի Կանոնագրքի 2.7.2 ենթակետի համաձայն ՝ փաստաբանը պարտավոր է վստահորդին բարեխիղճ իրավական օգնություն ցույց տալ իր մասնագիտական կարողությունների սահմաններում, պատշաճ կատարել վստահորդի հանձնարարության համար անհրաժեշտ գործողություններ:

Ինչ վերաբերվում է պատասխանողի նկատմամբ հարուցված ՀՀ Փաստաբանների Պալատի Կանոնագրքի 3-րդ գլխի 3.1.3 կանոնի խախտմանը, ապա պետք է արձանագրել, որ դիմողի կողմից չներկայացվեց որևէ ապացույց, որի միջոցով հնարավոր կլիներ հիմնավորել այն, որ պատասխանողը գործն ընդունելուց հետո այն կատարել է վճարովի հիմունքներով: Պատասխանողն իր հերթին պնդեց, որ վերը նշված ծառայությունների մատուցման համար նա գումար չի պահանջել, չի ակնկալել և իրեն ոչ կանխիկ և ոչ էլ անկանխիկ ձևով երբեք գումար չի փոխանցվել: Սրանից հետևում է, որ պատասխանողը պարտավոր չէր իրավական օգնություն ցույց տալու վերաբերյալ գրավոր պայմանագիր կնքել, քանի որ ծառայությունը մատուցվել է անվճար:

ՀՀ Փաստաբանների Պալատի Կանոնագրքի 30 հոդվածի 6-րդ կետի

համաձայն՝ կարգապահական խախտման փաստը ապացուցված լինելու վերաբերյալ բոլոր կասկածները, որոնք չեն կարող փարատվել օրենքի և սույն կարգի դրույթներին համապատասխան պատշաճ իրավական ընթացակարգի շրջանակում, մեկնաբանվում են հօգուտ պատասխանողի:

Պատասխանողի կողմից ՀՀ Փաստաբանների Պալատի Կանոնագրքի 3.8.4 ենթակետի խախտում կատարելու փաստը՝ Կարգապահական գործի քննության ժամանակ նույնպես հնարավոր չեղավ արձանագրել, քանի որ պատասխանողը չի հրաժարվել իրավաբանական ծառայություններ մատուցել «Դանիիս» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը: Նա հայտնել է, որ չի կարող մասնակցել 20.05.2014թ-ին ժ.16:00-ին նշանակված դատական նիստին , քանի որ նույն օրը ժ.16:30-ն պետք է մասնակցեր Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանում քննվող մեկ այլ քաղաքացիական գործով : Պատասխանողի ծառայություններից հրաժարվել է դիմողը և այդ մասին դիմում է ներկայացրել դատարան: Դիմողը չէր կարող հայտնվել անելանելի դրության մեջ, քանի որ այդ պահին Կենտրոն և Նորք-Մարաշ ընդհանուր իրավասության դատարանում քննվող թիվ ԵԿԴ/2543/02/13 քաղաքացիական գործը գտնվել է նախնական քննության ընթացքում և կողմը կարող էր օրենքով սահմանված կարգով միջնորդություններ, դիմումներ և ապացույցներ ներկայացնել դատարան :

«Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 39.8 հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ Փաստաբանների պալատի խորհուրդը կարճում է փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ վարույթն այն դեպքում, երբ հիմնավորված չէ փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքի առկայությունը:

ՀՀ փաստաբանների պալատի ընդհանուր ժողովի կողմից 11.02.2012թ. թիվ 1/4-Լ որոշմամբ հաստատված Փաստաբանի վարքագծի կանոնագրքի 28 հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ պալատի խորհուրդը կարճում է փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ վարույթն այն դեպքում, երբ հիմնավորված չէ փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքի առկայությունը:

«Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 39.9 հոդվծի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ կարգապահական պատասխանատվության հարցը քննելուց հետո Խորհուրդը կարող է փաստաբանի նկատմամբ կիրառել կարգապահական տույժ՝ նկատողություն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 39.7-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով, 39.8. հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, 39.9 հոդվածի 1-ին մասի 1-ին կետով և Պալատի փաստաբանի վարքագծի կանոնագրքի 28 հոդվծի 1-ին մասի 2-ին կետով՝ Պալատի խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց՝

1. Փաստաբան Կարեն Ռաֆայելի Հովհաննիսյանին (արտոնագիր՝ 1212) մեղավոր ճանաչել Փաստաբանի վարքագծի կանոնագրքի 2.7.2 ենթակետի

պահանջների խախտման համար և նրա նկատմամբ որպես կարգապահական տույժ նշանակել նկատողություն:

2. Փաստաբան Կարեն Ռաֆայելի Հովհաննիսյանի (արտոնագիր՝ 1212) նկատմամբ հարուցված թիվ ԿԳ-14066 կարգապահական վարույթը՝ Փաստաբանի վարքագծի կանոնագրքի 3.1.3 և 3.8.4 ենթակետերի պահանջների խախտման հատկանիշներով՝ կարճել:

3. Հանձնարարել Պալատի կարգապահական գործերը համակարգողին՝ սույն որոշման մասին իրազեկել Դիմողին և Պատասխանողին:

Սույն որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով՝ որոշումն ստանալու օրվանից մեկամսյա ժամկետում:

Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում բողոքարկման համար սահմանված ժամկետն անցնելուց հետո:

Նիստը նախագահող՝ Կարապետ Աղաջանյան